մենից հայութիւնն։ Քաղաքիս՝ Հայոց կոչուած թաղին մէջ պտըտած միջոցիս. ուր ցարդ երկաթագիր սեւացեալ տառեր՝ Հայ աչքերու հաճոյ և միանգամայն տխուր տեսիլ կ'ընծայեն, աստ և անդ քարերու վրայ, կարծես իբր ականջացս մէջ կը հնչէր Միխնոյի խօսածը երբեմն 'ի ժողովի տանուտեարց. «Ո՛վ Եղբարք իմ, առաւել ևս աքանչանամ և հիանամ վասն այս բանի՝ զի անուանիմք քրիստոնեայ, և ոչ կատարեմք զկարգ քրիստոնէից, և ոչ ողորմեցարուք դուք ձեզի... զի ահա բ ամ է, քանի այրեցաւ քաղաքն մեր, և դուք ոչ խորհիք զի մի դպրատուն շինել տայք՝ որ զձեր տղայքն ժողովեալ 'ի մի տեղ և ուսանին 'ի գիրս, և այլն»։ Այս յորդորակս Պր. Միխնոյ խօսած է 1604, մայիսի ›Ե, Կամենիցի առաջաւորաց ժողովին մէջ. ճառիս աւանդողը կը յաւելու՝ թէ երէցփոխանի խօսածը դպրատանց մասին «յոյժ հաճոյ թուեցաւ տանուտեարց և ժողովրդոց»։ Պր. Միխնոյ յանձն կ'առնու դպրոցաց շինութիւնը. «Արկ զձեռն 'ի գործ, և ետ շինել բ տունս հանդէպ միմեանց փայտաշէն, մեծամեծ, վայելուչ և գեղեցիկ շինուածով, այսինքն է՝ զպատուհաններն ազնիւ ապիկի, որ կոչի Վէնէտիկի, նկարած ծածկոյթներով... յոյժ գեղեցկազարդ, և ամրացոյց 'ի ներքոյ և արտաքոյ։ Կատարեցաւ 'ի փառս աւրհնելոյն բ դպրատունս և սրահինս, Նոյեմբեր Ը. ՌԾԳ.»։

Ի պարծանս ազգիս պէտք է աւելցնել հոս, որ ազգայինք 'ի Լեհաստան, յարքայից ստացած արտօնութիւնքը արդիւնաւորելով և ճարտարութեամբ մեծամեծ գումարներ հաւաքած են, և այդ դրամը